№ 38 ԹԻՀՐԱՆ ԿԻՐԱԿԻ ՄԱՐՏ 9

1897

ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՀՐԱՆ ԿԻՐԱԿԻ ՄԱՐՏ 9 № 38

«ՇԱՒԻՂԻ» տարեկան գինը 10 ռուբ. կէս տարեանը 6 ռուբ: Առանձին համարները 5 շահի:

Ընտանեկան տարեկան 8 ֆր. կամ 3 բուրլի կէս տարեանը 5 ֆր. կամ բուրլի:

արտասահմանից փողի համար պիտի որ մել հետևեալ հասցէով. Черезъ Баку въ Энзели Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ пер. Бекъ-Назарову.

ՇԱՒԻՂ

«ՇԱՒԻՂԸ» ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂ» խմբագրութիւնը բաց է 10-ից մինչև ժամը. բացի կիրակի և տօն օրերի:

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն եղով իւրաքանչիւր բառին մի անգամուայ համար 1 շահի: Ընտասահմանի յայտարարութիւնները բառին 1 կոպէկ:

Նամակները, նաև Պարսկաստանի բաժանորդագրութեան հասցէ. Rédaction «CHAVIGH» Téhéran. (Perse)

ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱՑԻՒԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 1897 ԹՒԻ

Դ. ՏԱՐԻ „ՇԱՒԻՂ“ Դ. ՏԱՐԻ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ

Կը հրատարակվի Թէհրանում նոյն ուղղութեամբ և նոյն ծրագրով: «Շաւիղի բաժանորդագին է Պարսկաստանի համար մէկ թուման. կէս տարեանը վեց ռուբ: Արտասահմանի համար 3 բուրլի կամ 8 ֆրանկ. կէս տարեանը 6 բուրլի կամ 5 ֆրանկ. Հնդկաստանի համար 6 բուրլի:

Ռուսաստանից դրամական ծրարները պիտի ուղարկեն անպատճառ հետևեալ հասցէով Черезъ Баку въ Энзели Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ пер. А. Бекъ-Назарову. Խնդրվում է ուշք դարձնել ճիշտ այս հասցէին և առանց մի բառ մոռանալու ուղարկել դրամները, այլապէս չեն ընդունվիլ: Եւրոպայից ուղարկել պէտք է փոխանակագրով կամ թղթադրամով. հասցէն Եւրոպայի համար Téhéran, Redaction «CHAVIGH», այդ հասցէին պիտի լինի նաև Ռուսաստանից խմբագրութեան ուղղած թղթակցութիւնները:

Խմբագրութիւնը ունի գործակալներ հետևեալ տեղերում:

Պարսկաստանում—Սալմաստ՝ պ. Եղբայրք Ս. Արզումանեանց: Սրտարիլ՝ պ. Յակովբ Էլչիբէկեանց: Ն. Ջուլֆայ՝ պարոնայք Գէորգ Զօրաբեանց և Ուտիք Ամիրխանեանց: Ռաշտ և Էնզելի պ. Ալէքսան Յովսեփեան: Մարաղա՝ պ. Մելքոն Խալափեանց:

Հնդկաստան—Կալկաթայ և Բոմբէյի պարոնայք Մեսրովբ Յ. Սէթեան և բժ. Մ. Մ. Արզումեան: Փինանգ և Սինգափուր՝ պ. Արշակ Ս. Տէր Ոսկանեանց: Ջավայ՝ Յարդանան Տէր Ս. Յոհան անեանց:

Գործակալ չեղած քաղաքներից՝ ինչպէս Ռուսաստան և Պարսկաստանի միւս քաղաքները, բաժանորդագրել կարելի է ուղարկել պարսկական և ռուսական նամակաղրոյմներով:

Ապարիկ բաժանորդագրութիւն ոչ մի դէպքում չէ ընդունվում

Պարսկաստանի համար հասցէն Redaction «CHAVIGH». Téhéran.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Շաւիղի ընթերցողներին. Մահ քեզ Եւրոպական խաղաղութիւնը խանգարող.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Մերկացումներ. Նշանաւոր ճաշկերոյթը. Մի քանի խօսք Փարրուխին. Հուպինկ քաֆ. ՆԵՐՔԻՍ ԼՈՒՐԵՐ. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւնները.—Ժանտախտը. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՇԱՒԻՂԻ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

—

Անցել են շուրջ երեք տարիներ այն օրից՝ երբ մենք առաջին անգամ պարսկահային ծանօթացրինք Շաւիղ շաբաթաթերթի հետ, անցեալին վրայ մի համառօտ հայեացք գցելով և նորա այդ կարճ ժամանակուայ գործունէութեան վրայ կանգ առնելով տխուր ենք որ մեր ընթերցողներին չենք կարող մի փառաւոր պատկեր և նկարագիր ներկայացնել նորանից: Շաւիղը առաջին տարուան մէջ հազիւ կարողացաւ շփվել ընթերցասէր ժողովրդին հետ և հիւրընկալ իլնրանց սրտերում, երկրորդ տարուան մէջ նա ունեցաւ թէ համակրողներ և թէ բացահայտ թշնամիներ, իսկ այս վերջինի ընթացքում նա վարեց շատ տագնապալից մի ժամանակ. մատնողութիւններ, թշնամութիւններ, ինարիգաներ չը մնաց որ նրա գլխին չը հանեցին, իսկ մենք մեր կողմից գործ դրինք ամեն ջանք նրա շարունակութիւնը չընդհատելու համար և անվհատաբար գործանց բոլորի դէմը առինք և քաջութեամբ շարունակեցինք մեր ստանձնած պաշտօնը: Ընթերցող, դու լաւ կարող ես հասկանալ որ մի նոր թերթ այն էլ կիսալուսաւորեալ Պարսկաստանում հրատարակվող, քիչ դժուարութիւնների պիտի բաղխի մինչ նա իրեն կարողանայ հաշտեցնել ժողովրդին հետ, ուրեմն այս մասին երկարելն յաւելորդ է:

Մենք հրապարակաւ խոստովանում ենք որ Շաւիղը անցեալ 1896 թուականին մէջ ունեցել է իր թերութիւնները. չը նայելով իր փոքրիկ ծաւալին նա պարտաւորեալ տեղ տուեց այնպիսի նիւթերի որ երբէք կապ չունէին ժողովրդական կեանքի հետ կամ օրինակ մի և չ որ լանկատ ծագող և մարող թերթի վարքահաչութիւնների և զառանցութիւնների դէմը առնելու համար, նա մրոտեց իր էջերը հակառակ ընթերցողների կամաց, իսկ մենք մի անգամ ընդմիշտ փակեցինք մեր էջերը այսպիսի հարցերի դէմ: Մենք նոյնպէս խոստովանում ենք որ մենք ժամանակին չենք կարողացել մեր բաժանորդներին հասցնել Շաւիղի շաբաթական թուերը, սորա պատճառը ինչպէս որ մենք սորանից յառաջ ևս յայտարարած ենք պիտի վերագրել գործաւորների յաճախ հիւանդութեանը և վերջերն Պարսկաստանում տեղի ունեցած անակնկալ դէպքին, թէև մեր նիւթական նեղ վիճակն էլ երկրորդական մի պատճառ կարող ենք տալ: Հարցնում ենք, մի աղքատիկ թերթ ինչպէս կարող է ապահովվիլ երբ քսան օրի տակ բաժանորդ ունեցող մի քաղաքում, 10 թիւմէն բաժանորդագին մի անգամից է կուլ երթում: Ընթերցողը ինքը թող դատէ այս մասին.....

Շաւիղը իր թերութիւններով հանդերձ՝ անուրանալի է որ ըստ կարի տուել է պարսկահային իր օգուտներն ևս ինչպէս հայկական այրող հարցերով՝ և ժողովրդական հարցերի առաջ մենք ազատաբար և առանց խնայողութեան զբաղեցրինք նրա էջերը: Գառան մորթով ծածկուած գայլերին Շաւիղն էր որ, համարձակապէս մերկացրեց և ժողովրդին ցոյց տուեց նրանց անանունակայ յատկութիւնը, Շաւիղն էր որ ասպարիզից դուրս քշեց կեղծ ազգասէրներին մերկացնելով նրանց աւազակները և ժողովրդի արիւնը ծծողներ: Վերջապէս Շաւիղն էր որ անվեհեր դանակով ցոյց տուեց ժողովրդին որ Սարաճեանի Սուքիասների և Եսայիների պէս հոգևորականներն՝ ագրուկներ և անարժաններ են, և դարձեալ չը նայելով մեր դրամական նեղ վիճակին, թշնամիների որոգայթներին և մատնութիւններին, քաջութեամբ և անվհատաբար պիտի շարունակենք մեր ստանձնած Ս. գործ, անցեալ տարիների փորձառութիւններից խրատուած և ապագայ յոյսերով խրախուսուած փակելով մեր պարզած դրօշին, «մտրակել ցարը և յառաջ մղել բարին»:

Այժմս Շաւիղը իր երրորդ տարին բոլորելով մօտիկ ապագայում պիտի մտնէ իր չորրորդ տարեշրջանը, որի մասին մենք արել ենք մեր հարկաւոր կարգադրութիւններն, մեր թերթն ընթերցողներին ապագայում աւելի հաճելի և դոհացուցիչ դարձնելու համար:

ՄԱՀ ՔԵԶ ԵՒՐՈՊԵԱՆ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ ԽԱՆԳԱՐՈՂ

—

Ահա թէ ինչ է վճռել մարդասէր կոչուած հրէշ Եւրոպան այն մահկանացուների համար որ կամենան իր խաղաղ նիրհը խանգարելու, մահ, սով, կոտորած և վերջապէս ռմբակոծում..... նա վճռել է այդ և գործադրում է առանց խղճի մի ամենաթեթև խայթի. գործադրում է նա այդ վճիռը ամեն անհատի, ազգի և ժողովրդի վրայ, որոնք բարբարոսի սրի տակից խնդրում են նորանից (Եւրոպայից) օգնութիւն... մահացնում է նա օգնութիւն խնդրողին, և հալածում է օգնող եղբօրը... ինչու, որովհետև այդ կարող է խանգարել իւր խաղաղ նիրհը, վիշտի անլաց քունը...:

Ի սէր իւր անհանգստութեան և խաղաղութեան Եւրոպան շատ անգամներ համերաշխութեան դրօշակի ներքոյ է հաւաքում իւր հարազատ, սակայն անհաշտ թշնամի ռուսմտեան շահամոլ պետութիւններին. համերաշխութեան կապով կապուած, չէ թէ հալածուած մի ժողովուրդ կամ ազգ օգնելու, այլ օգնութեան կարօտ, ճնշուած և մահամերձ քրիստոնեաներին ջարդելու և ջնջելու համար, որը նորանք գործնականապէս ապացուցին վերջին երկու տարիների ընթացքում արևելեան խնդրում իրենց բռնած ասելիքներ ընթացքով... նրանք (եւրոպական պետութիւնները) օգնութիւն աղերսող սովամահ հային նոյն վճռին ենթարկեցին, որին ենթակայ է այսօր քրիստոնեայ Կրէտէն: Բարբարոս թուրքը հայասպիւռ կոտորածով Հայաստանի մի ծայրից մտաւ միւս ծայրիցը դուրս եկաւ Շաքիր փաշայի շապկի մէջ. իսկ Եւրոպան ականատես բիւրաւոր անմեղ հոգերի դիակներին, աւելի ճնշում դործ դրեց նոցա վրայ և քաջալերեց արիւնարբու թուրքին և այդպէս էլ պարտաւոր էր անելու, քանի որ անհանգիստ հոյը իւր օգնութիւն հայցող աղմկալից ճիչերովը խանգարում էր մարդասէր (???) Եւրոպայի անոյշ և խաղաղ նիրհը:

Նոյնն է անում նա այս օր, իւր իրաւունքների համար մաքառող Կրէտէի հետ.... չէ թէ միայն չէ ցանկանում օգնել Կրէտէին, այլ մինչև անգամ վճռել է արմատից կտրել օգնութեան համար կարկառած Յոյն ձեռքը որ իւր արնակից քրիստոնեայ եղբայր և քոյրերին, արիւն կզակ թուրքի մարդախոշոշ սրից ազատելու համար չէ խնայում մինչև անգամ իւր կեանքը...: Յաւիտենական անհաշտ թշնամի, շահամոլ տերութիւնները, որ միայն ճնշուած և հալածուած քրիստոնեայ եղբայրներին մահուան դատապարտելու ժամանակ են հաւաքում համերաշխութեան դրօշակի տակը, այսօր անամօթաբար վճռում են շրջապատել Կրէտէն պաշտպանող Յոյն զօրքը նորան հարկադրելու համար,

որ իրենց նման միայն հանդիսատես մնայ իւր ազգակիցների՝ բռնութեան սրին ճարակելուն, նորան պարտաւորացնում են իւր մէջ ապանել եղբայրասիրական վեհ զգացումը և դառնալ լոկ շահախնդիր, կեղեքիչ և վաշխառու մի անզգայ, որ օգուտը եղբօր մահուան մէջ միայն որոնել գիտէ...: Փետր. 20-ին Գերմանական պետութիւնը բացարձակապէս հրաժարւում է, Կրէտէի ապագայ կառավարութեան մասին բանակցութեան մէջ մտնելուց քանի որ եղբայրասէր Յոյնը չի դարտակել Կրէտէն, թողնելով նորան անգութ թուրքի գթութեանը, որ ուզածին պէս ջնջէ նորան...: Ինչ անամօթութիւն...: Նոյն պետութեան կողմից պախարակւում է Անգլիան, որ Փիրաը պաշարելուն չը համաձայնեց, որը մի տեսակ հարուած էր Եւրոպական խաղաղութեանը...: Ախար ինչու համար է կրէտացին խանգարում խաղաղասէր Եւրոպայի քունը, որ նա էլ Փիրասը պաշարելով իրաւունքի և արդարութեան համար զոհւող քրիստոնեայ ժողովրդին ռմբակոծելու ծրագիրը պատրաստէ, որին թէև Անգլիան ով գիտէ թէ իւր շահասիրութեան որ մի գաղտնի տեսակէտից դրդուած չը համաձայնուեց...: Սակայն վերջապէս, 2 օրից յետ այսինքը փետ. 22-ին խաղաղասէր պետութիւնների ահեղ բարկութիւնը շարժելով Կոնիայ թափեցին իրենց վրէժխնդրութեան թոյնը երբ 29 վայրկեանի ընթացքում 70 հատ ռմբերով հարիւրաւոր քրիստոնեաներ ջարդելով ցրիւ տուեցին օգնութեան ադաղակող ժողովրդին և իջեցնել տուին նորանց օգնութեան եկող Յոյն եղբայրների դրօշակը: Զբաւականալով այդ քաջագործութիւնից, մի կողմից Ռուսը մի վերջնագրով դիմում է Յունաց, Կրէտէ դարտակելու 3 օրուան պայմանաժամով. իսկ միւս կողմից բոլոր պետութիւններն էլ միասին մարտ 5-ին մի վերջնագրով դիմում են Յոյն կառավարութիւնը որ մինչև 4 օր իւր զօրքը Կրէտէից յետ կոչէ (որպէս զի այնտեղի քրիստոնեայ եղբայրները մնան կառավարութեան ձեռքով շինուած մալեռանդ մահմեդական ամբոխի ձեռքը) հակառակ դէպքում, նորա նաւահանգիստները և ռազմանաւերը պիտի պաշարուին, գրաւուին, որի համար ծովապետների կողմից արդէն ծրագիր էր պատրաստուում....: Կասկած չկայ որ քրիստոնեայ պետութիւնների ռումբեր և գնտակը աւելի շուտ կթափւէ հալածուած և ճնշուած քրիստոնեայ ժողովրդի գլխին քան թէ մարդակեր թուրքի: Քրիստոնեայ պետութիւնը յարգելով իւր այն սկզբունքը թէ իրաւունքը հզօրինն է, աւելի շուտ կջնջէ մի ամբողջ Հայ կամ Յոյն ազգ քան թէ որևէ միջոց կգործադրէ որպէս զի թիւրք բռնակալ պետութիւնը դադրէ անմեղ արիւն թափելուց: Նա, Եւրոպան նախ քան թիւրք բռնաւորին մի թթու խօսք ասելու, հաւաքական վերջնագրով կոպառնայ, եղբայրասէր Յոյնը պաշարել և պատժել և եթէ նա չի յօժարել իւր հարազատ եղբայրները թիւրքի բարբարոսութիւններին զոհ տալ...: Բայց ինչու այսպէս տմարդի կերպով վարուել դէպ կրօնակիցը, արնակիցը և լուսաւորութեան հալածած զաւակ քրիստոնեայ մի ժողովուրդ, բանի որ նա իւր ամբողջ գոյութիւնով տառապում է անբարոյականացած մի բռնակալ կառավարութեան ժանգոտած լծի տակը: Այդ անում է մարդասէր Եւրոպան, քանի եղբայրասիրութիւնից աւելի քաղցր է իրեն խաղաղ նիրհը որի խանգարումն թերևս վնաս է իւր առողջութեանը կամ աւելի պարզ ասելով իւր շահասիրութեանը. նոյն իսկ այդ պատճառով է որ նա իւր համար նշանաբան է ընտրել, մահ քեզ Եւրոպական խաղաղութիւնը խանգարող:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԵՐԿԱՑՈՒՄՆԵՐ

III

Սարաճեան վարդապետը այդ բոլոր լրութիւնները, կեղտոտութիւնները, խայտառակութիւնները անելուց յետոյ, այժմ էլ կոչառակերութեան մի նոր սիստեմ է հնարել, ժողովրդի աչքին թօղ փչելու համար:

Օրինակ մի անձնաւորութիւն ժառանգական խնդրի մասին գնացել էր Սարաճեանի մօտ:

Որդիս, ժառանգական բոլոր խնդիրները պէտք է առաջնորդարանում վճռուին, տեղերում գրւին և համաձայնութեան թուղթերը կնքւին, որպէս զի վերջին օրերս զանազան խօսակցութեանց նիւթ չը լինի:

Այո, հայր Ս. ես էլ շատ եմ ցանկանում որ ձեր ձեռքով վերջանան. դուք մի՞ տասող արէք, որ գործը առաջնորդարանում վերջացնէք:

Առ այժմ մնաք բարև (աչը համբուրելուն 50 թիւմէն դնումէ հայր սուրբի աչը):

Որդիս օրհնեալ լինիս. բայց առ այս թղթադրամները, թող քեզ մօտ մնան. ձեր գործը վերջացնելուց յետոյ, մի օր կգամ ձեր մօտ, ինչ որ տալու ես բոլորը միասին կտաս: Լաւ հայր Ս. ինչպէս հրամայում էք այնպէս կանեմ: Էհ, որդիս ինչ ես շտապում, ուր ես գնում, տուր տեսնեմ քանի է. առնելով համրում է, ճիշտ 50 թիւմէն է. որդիս, այս թղթադրամները լաւ ապահով տեղում պահես. բրանը իմն են, ես միայն քեզ պահ եմ տալիս. չը լինի որ ծախես:

Այսպէս ուրեմն Սարաճ դադաչը ժողովրդի աչքերը կապելու համար, կոչառակերութեան մի նոր սիստեմ հնարեց, ժողովրդին կեղեքելու համար:

Մի ուրիշ օրինակ նրա գործունէութեան վերայ դաղափար կազմելու համար: հայր Սուրբ, մեր տղերքից մէկին բռնել են, բանտում շարչարում են, մի մարդ ուղարկիր, խեղճ է, բանտից ազատիր:

Ես առանկ գործերու չեմ խառնուիր կոր, «փոլիթիկան» ադ չը գիտեր: (ի հարկէ ժառանգական գործերը թողած, այդպիսի գործերու չը խառնուիր, որովհետև իւրալի պատառ չը կար:

Նմանապէս Ջաւրի յարգելի ընթերցողներին յայտնի է որ հոգաբարձուները դիմելով Հայրիկին մի եպիսկոպոս էին խնդրել Դավրէժի համար. Բայց մեզ հանրածանօթ Ս. Փանուէլեանցը, այդ իմանալով կանչել էր իւրերին, փիսանդերին, բարեկամներին և մի քանի հոգի անդրագէտ արհեստաւորներին, հայ փունջով ստորագրել է տալիս մի թուղթ, որը առաջուց ինքը պատրաստել էր, և ստորագրել տալուց յետոյ ուղարկում է Հայրիկին, որի մէջ գրւած էր թէ մենք շատ գոհ ենք Ս. վար, և միևնոյն ժամանակ շնորհակալ ենք Ձերդ Վեհափառութիւնից, որ մեզ համար ընտրել և ուղարկել էք Ս. վար. որի գործունէութիւնը արդէն մեզ յայտնի է:

Հայրիկը ստանալով այդ գրւածքը, հեռագրով պատասխանում է հոգաբարձութեանը թէ «դրանից լաւը չկայ որ ուղարկեմ»: Այժմ դիմելով հոգևոր կառավարութեան պետին, ամենայն Հայոց Կաթուղիկոս Հայրիկին՝ մթթէ այս լիրքն ամենից լաւն է, և այսքանը կասեմ: Մենք երբէք այսպիսի սրիկայի համար ձեզ շնորհակալութիւն չենք յայտնել. իսկ դու Ս. փանուէլեանց միւս անգամ չհամարձակիս այսպիսի լրբութիւն գործելու. հակառակ դէպքում ձեզ մի փառաւոր անունով կմը կրտենք, որը ձեզ քաջ յայտնի է: Եթէ իրաւապէս ժողովուրդը գոհ էր այդ անիծեալի զաւակից, որի անցեալը Ամերիկայում մեզ քաջ յայտնի է, դուք ինչու ձեր տունը հրաւիրել էիք ձեր փեսաներին և մի քանի արհեստաւորների: Վերջացնելով խօսքս, մի քանի խօսք էլ Ս. վար. կասեմ. էլ բաւական է, ամեն ինչ յայտնի եղաւ, ջուլ ու փալասդ հաւաքիր և շուտով հեռացիր եթէ չես ուզում որ ժողովուրդը քեզ խայտառակ կերպով վռնտի դուրս առաջնորդարանից:

Յաջորդ անգամից կգրեմ Ս. Ալէքսանեանցի և իր խմբակների մասին որոնք կազմում են ճեմարանի նախկին մանկլուիկներից, թաթոսներից և մածուն չիմացող կիրակոսներից:

Սազ

„ՆՇԱՆԱՒՈՐ ՃԱՇԿԵՐՈՅԹ Ը“

—

Փետրվար 8-ի կէսօրին ուստայ Ն-ի տունում ճոխ սեղանի շուրջը հաւաքուած էին մի խումբ՝ պագոսի խնկալկու հայ տիկիններ, որոնց կատարը, առաւօտեան խած փունջից արդէս տաքցած դուլապատում էին խաղճ փիլաւի պնակները մերթ ընդ մերթ միսեանց առաջարկելով մի պատառ փափուկ մրս կամ որ և է ընտիր երևցած ուտելիք, միւս կողմուս էլ մի խումբ երեխայք միմիանց գլխին տփելով խլխլում էին հաց ու պանիրի պատառները, այսպէս ամէն ոք զբաղուած էր իր լցացած փորը լիացնելու, մինչև որ վերջապէս ամենի ուշադրութիւնը դարձաւ սեղանի այն կողմը, ուր բազմած էր տիկին Մ-ը որը լաստ երևոյթին կառավարում էր սեղանը, և որը մի տեսակ ինքնավստահութեամբ առաջարկեց գինու բաժակները դարդակեն տիկին Մ-ի կենացը. «շատ լաւ» բռաւցին միաձայն և բաժակները օդի մէջ բարձրացան, ոչ, ոչ ինձ ընդունելի չէ ասեց տիկ. Մ-ը, եթէ չը սպասէք ամենքիդ համար էլ գառան ուղեղիցը մազա պատրաստեմ: Լաւ կսպասենք, քա՛ աղջիկ, էլ մի ծեծիր մեզ, ասեցին և սպասողական դիրք բռնեցին, մինչև որ ամեն մէկի համար մի մի պատառ մազա պատրաստելով, ահա, հիմայ հրամայեցէք ասեց տիկ. Մ-ը: Այս խօսքից յետոյ լուեց բաժակների ջրնդացը և մի ակնթարթում կարի՞ր բաժակները ճերմակեցան.... Այս մէջտեղ սեղանի մի անկիւնում մի քանի տիկիններ զբաղուել էին մի ինչ որ վիճաբանութեամբ, որը աւելի ծաւալ ստանալով բոլոր խամ բաջիքին տարել վ զբաղեցրեց հետևեալ վիճաբանութեանը, որի և ոչ մի խօսք չէր փախչում «Անյայտի» սուր գրչից, և որը պատրաստէ ընթերցողաց աչքի առաջ դնելով, նոցա ծանօթացնէ մեր թէհրանի տիկնանց բարոյական և մտաւոր զարգացումն և ուժը:

Քա՛, խամբաջի՛, տեսար ինչ օլին էին հանել էդոնք (դրանք) թատրումը (թատրոնում), ինչ ճաճուցին գցել, ինչ հարայ հուրային դրել էդ աներեսները անցած գիշեր..... Առաց ոեղանը կառավարող տիկ. Զ-ը:

Բա՛, ես էլ հէնց էդի ասում Մ...բաջուն, մէջ մտաւ մի հաստափոր տիկին, փիլաւի պատառը հինգ մատերի մէջ գնտակի ձևեր տալով չեն էլ ամանչուում խառնուել են տղերքի ու տղամարդկանց մէջ, մէկը երգում էր, մէկը բանաստեղծութիւն (բանաստեղծութիւն) էր ասում, մէկը լացում էր, էն մէկը մէկ հատ բէյտաղ (դօշակ) էր վեր առեր ու մէկ օտար տղամարդի հետը երգում էր, էլ ինչ ասես որ չարեցին, էնքանց էլ (այդպէս էլ) պանես տեսէ՞ ասա՞ քոյ Աստուած..... Բարկացած պիտ՞ շարունակէր իր ճառոմն բանութիւնը, եթէ նորա խօսքը չընդհատէր տիկ. Վ-ը որը վիրաւորուած հարցրեց թէ ուստ վ[illegible] խօսում այդպէս զայրացած, և թէ որի մասին էին այդ կծու գիտ դուժիւնները: Ամբոխը, բացականչեց խօսակցութիւնը [illegible] գրականութեան և փիլիսոփայութեան դէմ ոչինչ էր համարում Արիստոտելներ Պղատոնսեր և Սոկրատէսները—էն անաստուած աղջիկերքը, էն աներես կնանիքը (կանայք) որ անցած գիշեր թատրերին խաղում, ոչ մեր պապերից ենք լսել և ոչ էլ մեր ազգիցը, որ մէկ արբը (ամօթ) ունեցող կնիկ խառնվի կարիր (օտար) մարդկանց մէջն ու էնքան խալխի (բազմութեան դէմ ելեսը բաց արած երգասի, եա քի (կամ թէ) թատրը խաղանի..... Բա՛ ամօթ չի՞ աղջիկ..... Եա՞ քի ամօթ չի՞ բա ինչա՞—խռպոտ ձայնով ասեց հաստափոր տիկինը, ով արդէն փիլաւի գնտակաձև պատառը կոկորդը կոխած ջանք էր անում միւսը պատրաստել—բա խըջալաթ (ամօթ) չը քաշեց էդոնց (դորանց) մերը որ թողեց իրա աղջիկերքն ու հարսը թատրը խաղան, էլ էգէր (եթէ) ձեռքս ընկնի, գիտես ինչ կանեմ.....

Հա՛, հա՛, հա՛ քրքջաց տիկ. Մ-ը խամբաջի ինչքա՞ր ես ասում, չես իմանում որ վարժարան են գնացել 10—12 տարի մնացել, որ իրենց երեսի հայէն (ամօթ) դէն դնեն ու ի՞նչ որ ուզում են անեն, մէկ անգամ խոսիր հետները, [illegible] տես թէ, ասածներիդ քանի հազար փոնթ ու փնով (պակասութիւն) կը դ[illegible], թէ ինչպէս քեզ ու քու ասածնե[illegible] կը ծաղրեն, քանի որ աքը՛ր դու հէն [illegible] ու [illegible] պատճառ էլ մենք հնացել ենք, [illegible] դալ էլ չենք իմանում, բա սուտ որ ասում են թէ նոր նոր հաւերը [illegible] եկէ պողպատէ ձուերը են ածում.....

Խոնարհութիւնը մի առ ժամանակ դադարեց, իւղալի գոլմի հրաշալի նեղկայութեան պատճառով, ուր ամեն մարդ ջանանում էր իր պնակը աւելի և աւելի լեցնել, և շատեր էլ իրենց երեխերքի համար բաժին էին հանում մինչև որ վերջապէս նորէն տիկ. Զ-ը խօսք առնելով սկսեց ընդհատած վիճաբանութիւնը։

Մէյէմ (միթէ) հէնց էդոնք են, բա միտներիցդ կնաց քանի շաբաթ առաջ էլ էն կազէթչին.....

Ո՞ր կազէթչին, շտապով հարցրեց տիկին Մ-ը։

Էհ, էդ որ «Շաւիղա» չափ զարկում էլի—վիրաւորված պատասխանեց տիկ Զ-ը քանի՞ շաբաթ առաջ իրա տ ջիկան էլ թատրը խաղալու էր ուղարկել, բա տես հէնց էդպէսներն որ ուրանց (իրենց) արբեր դէն դրած ինչ որ ասես անում են, տեսէք ախբը մէկ պատուաւոր կնիկ կ՚ուզի թատրը խաղալու դու կերթաս խանում հարս տիկ. Մ-ից հարցրեց։

Ես Աստուած ո՞չ անի պատասխանեց տիկ. Մ-ը !!....

Ու կերթաս խալա (մօրաքոյր) հարցրեց հաստափոր տիկնոջը, որ դոլմի պնակը դադարված, գինու ահագին բաժակն էր լեցնում։

Հազար ոսկի տան ոտքս չեմ դնի էնտեղ որ էտ բի աբլուռներն են կանգնում ու հազար ու մէկ օրին հանում պատասխանեց նա։

Դէ տեսնում էք որ ինչպէս ասեցի նոր նոր հաւերը են տուս եկէ ու պողպատե ձուաբ ես ասում. մէկ էլ որ այսմնա շրջվել թէ, ով էր էս պանները տեսել, էն օրուանից որ աղջիկ վա ժարան ուղարկելն էլ մէկ տեսակ մոդ ընկաւ Թէհրանի հայերի մէջը էն օրուանից էլ ինչեր ասես որ չենք տեսնում.. Հոգի իմ գլխիս..... Կարծես թէ այս բոլոր խօսքերը տիկ. Վ-ին, որ լուռ լսում էր, բոլորովին տակն ու վրայ արին, այնպէս որ բարկութիւնից մինչև սագերի ծայրը կարմրած, իր հին դաս ընկերներին պատիւը պաշտպանել ուզելով բացականչեց—ինչեր էք խօսում..... հասկանում էք թէ կատարներդ տաքացրած ձեր խելքից ու մտքիցը բոլորովին բարձր մի խնդիրը վիճաբանութեան էք դրել. ու ինչ ուզում էք ասում էք, անպատճառ ո՞չ դուք—նշան անելով տիկ. Զ-ին ո՞չ այն մէկը և ո՞չ էլ միւսը, չէք կարող ասել այս, ինչ որ մի քանի հոգի անձնէրներ արեցին, ասում եմ չէք կարող որովհետև շնորհքը չունէք։ Ինչ լաւ կարող էք ուրիշների սեղանի վրայ մի բուռ անմեղներ բամբասել և հազար ու մէկ տեսակ հայհոյանքներ ու անվայել խօսքեր թափել նորանց հասցէին։ Եթէ քեզ հազար ոսկի տան չես երթար բեմի վրայ—խօսքն ուղղելով հաստափոր տիկնոջը որովհետև ձեր գաղափար ու դատողութիւնը նոյնքան հին է ինչքան ձեր անձը, հետևաբար չէք կարող գնահատել բեմի վեհութեան, բարձրութեան և դաստիարակիչ ոգին, և դուք տիկին մատով ցոյց տալով տիկին Մ-ին ձեր խօսքերովը զարմացնում էք ինձ այն պատճառաւ, որ գէթ քանի տարուայ դպրոցական կեանքը ձեր հին շապիկը պատռած պիտի լինէր, և բացի դա, կը ցանկայի, որ գէթ ձեր եղբայրներիցը օրինակ առնէիք որ այս օր Լ..... քաղաքումը դերասանութիւնը իրենց համար մի տեսակ արհեստ են դարձրել։ Իսկ դուք սիրելիս ժպիտը երեսին դիմեց, սեղանը կառավարող տիկ. Զ-ին կը խնդրեմ չը ծաղրէք ուրիշներին քանի որ աշխարհիս և ոչ մի անց ու գալ ձից տեղ ուրիշն չունէք։ Շատ խոսալ և ոչինչ չը գործել, ու գործողներին էլ ծաղրել, վատաբանել և բամբասել է ձեզ նման տիկիններին ամենագլխաւոր յատկութիւնը, մեր Թէհրանի 300 տուն հայ գաղթականութեան մէջից մի բուռ պարտաճանաչներ, վառված վեհ գաղափարներով և վսեմ իդեալով ամեն տեսակ զոհողութիւններ աչքի առած ոտք են դնում յոգուտ ընդհանրութեան և ազգիս բացուած տատասկատ և փշալից ասպարէզը, ուր փոխարէն քաջալերելու և օգնութեան ձեռք կարկառելու, ճախ սեղանների շուրջը հաւաքուած հայհոյում ու վատաբանում ենք նորանց՝ ամենասուրբ և բարձր նպատակի համար արած բոլոր ջանքերը. ի սէր Աստուծոյ բաւ է, բաւ, մինչև երբ խաւարի միջին ծածկուած հալածենք լոյսը և նորա հարազատները..... Լաւ լաւ բարկացած բոռաց տիկ. Զ-ը, ինչես ճրագի վրան, մի քիչ շուտ գնացած լինէիր էդ պռոտների վարժարանը, որ շուտով պաշտպանէիր էդ բի աբլուռներին լաւ հիմա էն ասա, որ էդ թատրրի փողերս ում պէտք է տան։

Ո՞ւմ պէտք է տան մէջ մտաւ հաստափոր տիկինը բա չը տեսար ինչ լաւ լաւ սև օյմաններ էին (շրջագեստ) հագել, բա էդոնց փողը ով պիտի տար, հիմի հաւատում ես որ մուֆթ (ձրի) թատրը կը խաղան, ես իմ հոգին, որ աւ քասիբթէն (արհեստ) են ձեռ առել թատրը խաղալու հարիւրներով ոսկիները ջրնգալով ձախք անեն...

Իսկապէս, որ այդ մէկը բնաւ չէի սպասում ձեզանից աւելի գայրացած ասեց տիկ. Վ-ը. բամբասել, հայհոյել, ծաղրել և վատաբանելը ձեր մէջ բոլորովին սովորական է, սակայն զլպարտել մէկին, չէի սպասում։ Ո՞ր մէկներս ենք, որ անծանօթ ենք մինչև այսօր Թէհրանում տրուած ներկայացումների բուն նպատակին, որ մէկներս չենք գիտեր որ բոլոր այս թատերական ներկայացումները, երեկոյթները և նոյնանման ձեռնարկները լինում են մի այնպիսի նպատակի համար, որ մեզանից ամեն մէկի համար նոյնքան սուրբ և նուիրական է, որքան ձեռնարկողների համար..... Ո՞վ չի գիտեր թէ հասարակութեան տուած ամեն մի կոպէկին հարիւրաւոր աչքեր են հսկում, և թէ գործածւում է նա միշտ, ազգիս կրթութեան, առաջադիմութեան, լուսաւորութեան և միանգամայն վերածնութեան գործին։ Ուստի ինչն է հարկադրում մեզ զրպարտել բոլոր այն անձնաւորութիւններին, որոնք մոռացած իրանց ամեն տեսակ հանգստութիւնը, գիշեր ցորեկ ոսկէ ժամերը զոհելով ծառայում են միայն և միայն ազգիս շահերին, լաւ չի՞ լինիր, որ փոխարէն այս անվայել զրպարտութիւնների աւելի յաջողելենք դէպի մեր առաջադիմութիւնը ձգտողներին և աշխատողներին... Այս ասելով բարկացած գետին շպրտեց ծնկին նստած փոքրիկ մանուկը, և սենեակիցը դուրս գնաց կարծես թէ իր բորբոքած գլուխը մի քիչ զովացնելու համար..... Քա աղջի ձայն աւեց տիկ. Զ-ը էս սրճրէն (սեղանը) քաղէք, էս Վ-ը ասես բա կատաղել է իր խօսքը տիկ. Մ-ին ուղղելով աղջի ախար էս էլ վալ ժառան քամի կայ գլխին, բա չէս ըմանում (գիտեր) հերա (ինչու է) ուրան շապիկը պատռում. լաւ որ էլ էդուր հետը չը խօսէք կարդցուրի հետ խօսալը խաթա բալա է, մէկ էլ տեսար էս ամեն խօսքերը հէնց էդուց «Շաւիղի» մէջը գցեցին, լաւ է որ տազ անենք ու չը խօսանք։

Արդէն սեղանը հաւաքել էր, ու սուրճի մատուցարանը մի կողմից. իսկ պատուական սակայն շատախօս դալլանը միւս կողմից էին այցելում յարգելի տիկիններին և հանգստացնում նոցա ուղեղը, որ երկար վիճաբանութիւնից արդէն հոգնած էր. Նոյն իսկ այդ միջոցին էր որ «անյայտը» այս նշանաւոր ճաշկերոյթից իր գրչի համար հաւաքելով հարկաւոր նիւթը դիմեց «գազէթչուն»։

„Անյայտը“

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ Պ.ՖԱՐՐՈՒԽԻՆ.

Շաւիղի 36 համարում, ձեր գրած հրաշալի ֆելիէտոնից այնքանը հասկացայ, որ հետևելով տեղային սովորութեանը պոչաւոր աստղի երևալուն հալելիներով էիք դիմել նրան. ներեցէք ինձ ձեզ դիտել տալ, որ աւելի ճիշտ և անսխալ գործելու համար ձեր ձեռքի հայելին պիտի լինէր երկու կողմանի, արդեօք այդպէս էր, և եթէ այո՞ բացի Աստղի պոչի մէջը գտնուած «խաներ և կոտրած սուրերը», տեսաք նաև Շաւիղի ֆելիէտոնիստ պ. Ֆարրուխին...։ Թոյլ տուէք ինձ ձեզ դիտել տալ նաև, որ ես փալասը այնպէս պատռեցի որ էլ տեղ կամ որևէ ճեղք չմնաց ուր իմ գլուխս բռնուած մնալու լինի։ Այն որ ինձ շատ զարմացնում է, այն է որ դուք մոռանում էք որ փալաս Արևելեանը պատռել և բնաջինջ անելուս գլխաւոր պատճառը այն էր որ հասարակութիւնը իւր բարեկամը և թշնամին ճանաչէ։ Ուստի հարցնում եմ ձեզանից թէ ինչու է գլուխս մտել փալաս ճեղքի մէջ, քանի որ անյայտացրել և բնաջինջ եմ արել նրան, ձեզ նման հազարաւոր անծանօթներ նրա ճիրաններից ազատելու համար։

Սիրելի բարեկամս, սիրտը կլղանայ, միտքը կոնէ և ապա գրիչը կծնէ...։

Սոկրատ Մ. Գելոֆեանց

ՀՈՒԳԻՆԿ ԳԼՈՒԽ

(Շարունակութիւն № 37-ից)

Երորդ կամ նաւաղելու աստիճան։ Այս աստիճանի փոփոխութիւնը յանկարծ չէ լինում այլ փոքր փոքր է զիջանում և իւր մասնաւոր նշանները ու բնաւորութիւնները կորցնում, խուխը կակղանում հեշտանում, բերանից արտաքսուածը աւելի պարզ գոյն տանում և այսպէս հազը բոլորովին վերջանալով մանուկը առողջանում է

Գուշակութիւններ և զգուշութեան ու դեղատուութեան միջոցներ։ Խորոզակը կամ ինչպէս կոչել ենք «հուպինկ քաֆրամիշտ մի անկատակ հիւանդութիւն է որ ընթրցողները և ծնողները լուրջ տեսակէտներով պիտի հսկեն իւրեանց զաւակներին։

Թէև շատ մանուկներ բարեբախտ ելք են ունենում և առանց դեղատվութեան առողջանում են, իսկ պատահում է որ շատերը մեռնում էլ են յատկապէս այսպէս դէպքերում երբ ծնողները իւրեանց զաւակների հիւանդութեան համար անփոյթ են մնում և գիտուն բժիշկներին չդիմելով, հէնց իւրեանք են գերեզման պատրաստում իւրեանց զաւակների համար, որը գնալով սաստկանում և բաղդրվում է ուրիշ հիւանդութիւնների հետ և այպէս մահ պատճառում։ Առ հասարակ պարագաներն սաստկանում են երբ հիւանդը շատ փոքրիկ և ատամները բուսնելու ժամանակներումն է լինում, կամ մեծ քաղաքներում կայան ունենալը, աղքատութիւնը ու դրան հետևող ելքերը և տարափոխիկ հիւանդութեան սաստկութիւնը նպաստում են սրան։ Բժիշկները անհամար դեղատուութեան միջոցների ցուցակներ են առաջ բերում և իւրանքանչիւրը իւր կարծած դեղն է գովում։ Ամեն մի անձնաւորութիւն առանձին և մասնաւոր դեղ ու դարման ունի, բայց դեռ սրանք մեր կարծիքով միայն փորձառութիւնների միջոցներ են դեղատվութեան տպարէզը շատ մութ է և դեռ մեզ չէ հասցրել այն աստիճանին որ կարող լինենք այս մասնաւոր հիւանդութեան դեղ ու դարմանը մասնաւորացնել։ Բոլոր միջոցները սպառւում և ի դերև են ելանում և դեռ այս ցաւն ամարգել որ անխաղտ իւր ընթացքը շարունակում է։ Ինչ հնարներ որ գործադրվում են միայն կարողանում են դրա սաստկութիւնը և հիւանդի տառապանքներն թեթևացնել և աւելի ոչինչ։

Դեղատվութիւնը երեք ճիւղերի է բաժանուած։

1. Ըստ կարևորին պէտք է ջանալ որ նուաճի հազի բորբոքումն և միևնոյն ժամանակ զգուշութիւններ են հարկաւոր որ մի գուցէ թէ շնչափոխի խողովակներում արտաքսուած հիւթերի կուտակումները լինին։

2. Խափանել և արգելել բոլոր բաղադրութիւնները և գործ դնել դեղատվութեան այն միջոցները որ հարկաւոր են բաղադրութիւնների համար։

3. Խնամ տանել ընդհանուր առողջութեանը և ռնգերից արտաքսուած հեղուկների որպիսութեանը։

Մանուկների համար անշուշտ պիտի կանոն դրի և անմիջական միջոցների դիմել և ուշադրութիւն դարձնել լանջի նշաններին։ Հիւանդը պիտի բաւականին տաք սենեակում պահի։ լաւ

ասուեղէնով, ֆլան երներով հագձի և տաք խմելիքներ տրուի որպէս զի արտաշնչութիւնն և քրտնելը յաջող ելք ունենայ։ Առաջը կարելի է մի լուծողական տալ և յետոյ այս խառնուրդը որ պարունակում է Լայքը-ով Ամմն Ասէթ և Վայնըմ Ափիկաք որոնք մեր կարծիքով և փորձառութիւնով լաւ դեղերից մէկն է։ Ամեն հիւանդատրոջ չենք խորհուրդ տալ որ ինքնագլուխ դեղեր փորձէ իւր հիւանդին համար այլ թող դիմէ ուր հարկն է։

Վատ եղանակներում երբ մի երեխայ տոչորվում է հուպինկ քաֆով, պիտի նրան միանգամայն տան մէջը փակուած պահել մինչև անգամ այնպէս մի սենեակում որի օդը միակերպ բարեխառն է. բայց գեղեցիկ և օրուայ տաք ու մեղմ եղանակներում անշուշտ օգտակար է որ հիւանդը բացօդեայ առողջարար և մաքուր տեղերում լինի շորերը բաւականին տաք լինելու է։ Անհրաժեշտ պարտականութիւններից մինը էլ կերակուրներն են և սննդական խոզովակը, այսինքն ստամոքսը, աղիքները հայլն հայլն և սրանց աջող կամ անաջող գործողութիւնը հայլն։ Եթէ ատամները կսկսին բուսնել պարտական ենք զգուշութիւն դարձնել դրանց։ Եթէ մանուկները հասկացող և խոհական են որքան կարելի է ծնողները կամ դայեակները պիտի դրանց սովորեցնեն որ անօգուտ հագը զսպեն։

Ապաքինութեան ժամանակներում կարողաբեր դեղեր են հարկաւոր։ Երկարեալ հիւանդների համար դադարեցնելը կամ ծովային ճանապարհորդութիւնը օգտակար է։ Մաքուր ու սննդարար լաւ կերակուրներ են հարկաւոր ու փոքր էլ գինի։ Թողեալ այս փոխադրական հիւանդութեան ծագման երեսից հեռանալը հուպինկ քաֆից պաշտպանութիւն չը կայ։ Ներսէ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Անցեալ շաբաթ օր մի քանի սրիկաներ քաղաքումս լուր տարածեցին, որ Վեհափառ Շահը հանդեաւ ի Տէր, քաղաքը խառնակութիւն ձգելու նպատակաւ։ Շաբաթ մինչ կէս օր ժողովուրդը իրարանցման մէջ էր. բայց բարեբախտաբար լուրը սուտ դուրս եկաւ և Վ. Շահը կէսօրից քիչ առաջ, բաց կառքով պտըտեց քաղաքը և ժողովուրդը հանգստացաւ։

—

Անցեալ յորեքշաբթի տեղոյս զօրահանդիսի հրապարակում, Կրուպէ գործարանից նոր ստացած թնդանօթների զօրահանդէս կար պատերազմական նախարարարի ներկայութեամբ. շատ աջող անցաւ։

—

Խմբագրութիւնս այս տարի, նուիրում է մի օրինակ Շաւիղ, Համադանի նորակազմ ընթերցարանին։

—

Յունվարի 24 և 25-ին հայ սիրողների խումբը ներկայացրեց «Սև հողեր» դրաման, մասնակցութեամբ տ. և պ. Պապեանցների։ Ընդհանրապէս իրրև սիրողներ, ներկայացումը շատ աջող անցաւ և երկու գիշերներն էլ թատրոնը լի էր։ Ինչպէս երևում է, թէհրանցիները քիչ քիչ սկսում են թատրոն յաճախելը, միայն մի բան որ սխալ էր կարդացուած այն էր որ, թատրոնական կոմիտէը շատ թանգ էր նշանակել տեղերի գինը որ ամեն մարդի մատչելի չէր։

Այդ գիշեր դարձեալ տ. և պ. Պապեանցները ցոյց տուին որ, ձիրք ունեն բեմ դուրս գալու։ Մի բան որ, բաւականին վնասեց թատրոնի եկամուտին, այդ հայր սուրբի ներկայութիւնը էր բիւֆէտի մէջ։ Հայր սուրբը ներկայ լինելով բիւֆէտում, ոչ ոք ժողովրդից չէր գընում այնտեղ քաշուելով հայր սուրբից և այդ պատճառով բիւֆէտը բաւականին եկամուտ կորցրեց։

—

Մեր անցեալ համարում «Մշակից» արտատպեցինք մի յօդուած սովեալներին օգնելու համար, և այդ այն նպատակով, որ թէհրանցիք իմանան, որ ռուսաստանցիք հաղարներով չը բաւականալով միլիոններ են պահանջում ժողովրդից, բայց թէհրանցին աղէտի սկզբից մինչև վերջը մի կոպէկ անգամ չը տուեց իր քաղցած եղբօրը։ Թող գոնէ թէհրանցին օրինակ վերցնէ յետ ընկած Դավրէժից, ուր բաւականին գումարներ հաւաքուեց սովեալների համար։ Լաւ մտածեցեք թէհրանցիք, որ կարող է ձեզ հետ էլ մի և նոյն դէպքը պատահել և այն ժամանակը երես չէք ունենալ ձեռք մեկնելու դէպի ձեր եղբայրները։ Քանի ուշ չէ խորհուրդ կը տանք ձեզ գոնէ մի փոքր գումար հաւաքել և ուղարկել Կովկասի բարեգործական ընկերութեանը, տեղ հասցնելու համար։

—

Համադանի նորակազմ աղքատիկ ընթերցարանի վարչութիւնը խնդրում է տպագրել հետևեալը։ Համադանում մի քանի եռանդուն երիտասարդների աշխատութեամբ ձեռնարկուած լինելով մի ընթերցարան, ընթերցանութիւնը տարածելու Համադանի աղքատ ժողովրդի մէջ, խնդրում է պ.պ. հեղինակներից և թարգմանիչներից, որ իրանց աշխատութիւններից մի մի օրինակ ուղարկեն այդ աղքատիկ ընթերցարանին, որի ցուցակը կը տպուի Շաւիղի մէջ, Հասցէն հետևեալն է։ Թէհրան. Սաղաթիել խան Զօհրապեանց։

—

Այս օրերս մի քանի բժիշկներ Ռուսաստանից հասան Թէհրան և իսկոյն ճանապարհ ընկան սահմանագլուխները քարանթինա հաստատելու ժանտախտի առաջն առնելու համար։

—

Մեզ տեղեկացնում են, որ Համադանի երիտասարդութիւնը վերջապէս յաջողել է հիմնել մի ընթերցարան, որը թէև հանդիպել է շատ և շատ արգելքների և մի դաս միսիոնարացած հայ բողոքականների ստեղծած դժուարութիւններին։ Կը յուսանք որ լուսաւորութեան և յառաջադիմութեան աշխատող հայերը որ տեղից էլ որ լինին, իրենց օգնութիւններով պիտի քաջալերեն այդ մի բուռ երիտասարդութեանը, որը վստահ ենք որ այդ խաւար քաղաքի ապագայ լուսաւորութեան աղբիւրը պիտի դառնայ։

—

Ինչպէս լսում ենք, հայր Այվազեանը միջոցներ է ձեռք առել, տեղիս օրից օր ընդարձակող շիրաչութեան (օղեվաճառութեան) կեղտոտ արհեստի առաջն առնելու, եթէ ոչ բոլորովին ջնջէ, գէթ սահմանափակէ այդ արհեստը։ Մեր կողմից յաջողութիւն ենք մաղթում այդ ձեռնարկի համար, բայց և այնպէս պիտի չխնայենք տեղապահ հօրը յիշեցնելու, որ թէև իւր այդ ձեռնարկը գովելի է և պատուաբեր, սակայն նորան իրագործելու համար ստեղծած միջոցները խիստ վնասաբեր է տեղիս աղգայնոց ապագայ գործերին։ Այս խնդիրը բացադրելու համար, խոստանում ենք առաջիկայ համարով հրատարակել մի նամակ որ այս օր է տեղ հասել։

—

Հաստատ աղբիւրից տեղեկացել ենք, որ. թէ տեղիս և թէ Համադանի հայ բողոքական համայնքները միջոց են փնտռում, Ամիրիկացի միսիոնաների լծից ազատելու համար։ Այդ մենք վաղուց էր որ սպասում էինք. քանի որ լաւ համոզած էինք թէ, մերկ և հալածուած Քրիստոսի այդ հնչասէր և փառամոլ միսիոնարների գաղտնի քաղաքականութիւնը, վերջապէս մի օր բացուելով հայ բողոքականը պիտի հասկանայ թէ ինքը ուրիշ ոչինչ էր, այդ միսիոնար կոչուած գազանը և հպարտարար ծների համար, եթէ ոչ նոցա քրիս։ տոնական և կրօնական խանութների համար մի տեսակ վաճառք... Բողոքականութեան և միսիոնարների գործունէութեան մասին յառաջիկայ համարում լոյս պիտի տանք մի հեռաքլքիր պատմական զրուածք, որ մեր աշխատակիցներից մէկն է մեզ ուղարկել։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Լոնդոնից հեռագրում են ամսի 3-ին որ, պետութիւնները՝ ներկայացրել են մի վերջնագիր Կ. Պոլսում, և մի ուրիշն էլ Աթէնքում, որով առաջարկում են թէ Կրէտան ինքնավարական պիտի լինի սուլթանի գերիշխանութեան ներքոյ, և որով պահանջում է Յոյներից 6 օրուան միջոցում հրաժարել իրենց զօրքը Կրէտայից։

—

Նոյն տեղից հեռագրում են որ Սալիսբրին յայտնեց լորդ Սրին թէ, պետութիւնները, Բրիտանիայի առաջարկը ընդունել են, բայց թրքական զօրքին Կրէտայից հրաժարելու վերաբերմամբ անհամաձայն են։

—

Քուրզոնը՝ քոմանների յայտնեց թէ, պ ետութիւնների արդի բռնած դիրքի ներքոյ, Յունաց հետ միութիւն կազմելը անհնար է։

—

Լոնդոնից հեռագրում է Բ[illegible]ների զորաձակալութիւնը որ Քանիայում, թուրքական ժանդարմները, ապստամբել են և սպանել են իրենց քաջալերին։ Արտաքին պատերազմական նախարարները կոչել են միջամտութեան, որոնք հետևապէս անձնատուր արեցին ապստամբներին։

—

Կրէտայի կառավարութեան առթիւ, բանակցութիւններ են ինում պետութիւնների և Բ. Դրան մէջ։ Բ. Դուռը պնդում է թէ Օսման «սուլթանը» պիտի որոշուի։

—

Վերջին լուրերը հաղորդում են թէ Սելինոն և Քանդանոն, օտար պաշտպանութեան են հպատակուել։

—

Աթէնքից հեռագրում են ամսոյս 3-ից որ Յունաց մամուլները համաձայնուել են, սաիպել կառավարութեանը որ չընդունի կատարել պետութիւններ վերջնագրի պահանջները։

—

Յունաց պատերազմական նախարարը՝ իր խորհուրդը (թարմ ոյժեր զրկել Կրէտայ) մերժ ելու պատճառով հրաժարուել է իր պաշտօնից։

—

Աթէնքում և Կ. Պոլսում ներկայացած վերջնագիրը խորհուրդ է տալիս Յունաստանին, չը հակառակել պետութիւնների դիտաւորութեանը, որովհետև հակառակ դէպքում պետութիւնները կը պարտաւորուին դիմել խիստ միջոցներ [illegible] լու համար։

—

Ընդհանրապէս սպասում է թէ Յունաստանը կը մերժի պետութիւնների պահանջները։

—

Աթէնքի միտրոպոլիտն հեռագրել է Քանդիոյի Արքեպիսկոպոսին, որը խնդրում է յանուն քրիստոնէութեան բարձրացնել իր ձայնը ի դիմաց Կրէտացիների։

—

Սինիոր Բարբատոն, իտալական Դէպուտին, մի թիւ Իտալական պատերազմական զինուորներով հասել է Աթէնք Կրէտայ երթալու համար։

—

Աթէնքից մեզ հեռագրում են թէ. մեծ շարժում կայ այստեղ։ Մ ծ բազմութիւն այս երեկոյ, մուտ գրեցին պալատը, ուրտեղ պառաջին ադատերազմ, պատերազմ։ Թագաժառանգը երևաց բալքոնի վրայ ուրտեղից նա շնորհակալ եղաւ թագաւորի կողմից, նրանց եռանդուն ցոյցերի համար և միևնոյն ժամանակ մի ցաւ նրանց հետ խաղաղութիւն ձգելու համար։

—

Յունաց նոր պատերազմական նախարարը մի շէյխելիսլամով, բ լոր ոֆիցերներից քաջ գործունէութիւն է պահանջում։ Միևնոյն ժամանակ, նա շտապում է թնդանօթաձիգներ ուղարկել Թրքա Յունական սահմանագլուխները։

Լոնդոնից սմսոյս 4-ից հեռագրում են որ Եւրոպական մայրաքաղաքներում, հաստատում են պետութիւնների վերջնագրի պահանջների մերժումը Յոյներից։

—

Տուլոնի չորս ֆրանսիական մարտանաւերը պատրաստւել են Կրէտական ջրերի մէջ մտնել, անմիջապէս երբ զեկուցում չը տրւի նրանց։

—

Լոնդոնից գրում են, որ Թեսալոնիկի սահմանագլխի ներկայ դրութիւնը կրիտիկական է. թրքական թարմ ոյժեր շարունակում են գնալ այնտեղ։

—

Երկու Ցունական մարտանաւեր թողին Պիրէան կնքած հրամանագրերով։

ՇԱՒԻՂԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Դավրէժ.—Լ. Բ. ձեր ուղարկած թղթակցութիւնները չի տպւի, անձնական վէճերը մեզ չի հետաքրքրում։ Գրեցէք ուրիշ նիւթերի մասին։

Ղազվին.—„Նեան“ ընկ. ձեր համարները շարունակ ուղարկում ենք դարմանալի է, որ դուք չէք ստանում, դիմեցէք փոստին։

Թէհրան.—Մակար Մակարեանց (Փալաս-Արեւելեանի Աբատանատէր). ձեր բաժանորդները մեզ հանգիստ չեն թողնում, և պահանջում են, որ կամ վեց ամսւայ փողը յետ վճարէք կամ պիտի տպագրէք «Էջեպ ի Հայաստան ճանապարհորդութիւնը (գրեց Մ. Ա. Մարգարեանց 35 տարի առաջ) բանասիրականը ի պատիժ Փալաս-Արեւելեանի գրաշարներին։

Նոր Ջուղա.—Մաթուսաղայ Ղարախանեանց ինչն էր ստիպում ձեզ Բաֆֆի ընկերութիւնից ստանալ մեր բաժանորդագրութիւնները և մինչև այսօր ձեր մօտ պահել, չէ որ սէկ տարի և երեք ամիս է անցել չը լիսի կարծում էք Զաւիղի փողերն էլ պ. Ծատուրեանցի նաւթի փողն է կամ Ն. Ջուղայի որբևայրի կանանց նամակները, որ ինչ որ ուզէք կարողանաք անել։ Խմբագրութիւնը ձեզ 10 օր ժամանակ է տալիս վճարելու, եթէ չը վճարէք. այն ժամանակ ձեզ հետ ուրիշ տեսակ կը վարւենք։

ԺԱՆՏԱԽՏ

—

Ժամանակէ մը ի վեր է որ Պարսկաստանի ժողովուրդը մանաւանդ Թէհրանը մեծ յուզման մէջ է, ամեն անոնք որոնք իրարու կը յանդիպին ըլլայ տան մէջ, ըլլայ փողոցի կամ շուկայի մէջ, իրարու կը հարցնեն թէ ժանտախտէն ինչ լուր. ասոր դէմ ոմանք կը պատասխանեն թէ ժանտախտը Ջիրազ հասեր է, ուրիշները կըսեն թէ Իսպահան արդէն վարակուած է, իսկ ուրիշներ ալ թէ Թէհրանէն բիչ հեռու գտնուէին այն ալ վարակուած պիտի հաշակէին։ Բայց բարեբախտաբար աղնիւ ընթերցողաց կը վստահացնեմ թէ այդ սոսկալի հիւանդութիւնը Պարսկաստան չի մտնելէ զատ դեռ անկից ալ շատ հեռու է, և մեր Օղոստափառ կայսրը՝ ինչպէս ամեն ատեն, նոյնպէս այս պարագային տակ իր սիրոյի հպատակներուն հանդստութեանը համար ամեն տեսակ անմիջական միջոցներ, ըլլայ պաշտպանողական կամ նախազգուշական, վերջապէս 1 փետրվար 1897 թուակիր ֆերմանով կարգադրել է, անոր համար ամեն մարդ հանգիստ ըլլալով պէտք է նախազգուշական միջոցներուն կարեորութիւն տայ. փոխանակ «ինչալլահ այդ հիւանդութիւնը չենք տեսներ» և կամ թէ կը մաղթեմ որ մեր երկիրը չի վարակուիր» ըսելու տեղ, որ ես ականջովս շատ անգամներ լսեցի և փոխանակ այդ տեսակ խօսքերով մխիթարելու և ժամանակ անցնելու պէտք է գործնական միջոցներու դիմել, որովհետև այդ ինչահլլահները և մաղթանքը, իրենց հին բարի ժամանակներուն մէջ ունեցած փրկարար ազդեցութիւններն այսօր կորսնցուցած ըլլալնուն համար այդ տեսակ դատարկարանութիւններով ժամանակ անցնելու չէ, և քանի որ այսօր գիտութիւնն է աշխարհի տիրողը և ոչ թէ մաղթանքը կամ աղօթքը և տասնրիններորդ դարը գործելու և յառաջադիմելու դարը ըլլալով այս նպատակով ապրող ժողովուրդները միայն կրնան մերկուել այդ սոսկալի հիւանդութեան ձեռքէն, որ մահ և աւերում կը բերէ ինչպէս որ արդէն շատ մը դէպքեր ըսածներուս լաւ ապացոյցները կրնան սեպուիլ. ուստի այս ամենը ի նկատի առնելով, և ժողովրդին պզտիկ ծառայութիւն մը ընելու պիտաւորութեամբ, ժանտախտի վրայ լաւ հեղինակի մը ուսումնասիրութիւնները թարգմանելէ զատ մի քանի յաւելուածներ ալ աւելցուցի զայն աւելի օգտակար ընելու նպատակաւ։

Ժանտախտը հիւանդութիւն մէ որ հին աշխարհի մեծագոյն մասին մէջ մեծ աւերումներ գործելէ վերջ այսօր գրեթէ կեսրոնացած է Ասիական Թուրքիոյ մի քանի գաւառներուն, Հնդկաստանի և սահմանակից մի քանի երկիրներուն մէջ և գրեթէ հոն տեղական հիւանդութեանց կարգն անցած է և որ երբեմն թեթև երբեմն ալ զօրաւոր համաճարակներ կը կազմէ, իսկ այս համաճարակները կրնան երբեմ իրենց կեդրոնէն շատ հեռու երկիրներու մէջ ներմուծման միջոցաւ։ Համաճարակի ատեն երկրորդական կեդրոնները կրնան սեպուիլ. Կարմիր ծովու եզերքները, Պարսից ծոցը և Կասպից ծովը, ուրկից հիւանդութիւնը դիւրութեամբ աւելի հեռու երկիրները կը մտնէ։

Ժանտախտը հիւանդութիւն մէ որ բռնուած անձէն առողջի մը դիւրութեամբ կը փոխանցուի և այդ փոխանցող սերմը որ ժանտախտ յառաջ կը բերէ, դեռ դիտուններուն անծանօթ մնացած է. կերպէ թէ չչատանթեան և մարսողական գործարանները մէջոցու մարմնոյ մէջ կը մտնէ, բայց զգեստները անկողինները, գոտիները, մանաւանդ դիակները գլխաւոր փոխանցող նիւթերը կը կազմեն, տաք եղանակները շատ կը նպաստեն այս հիւանդութեան տարածման բայց միևնոյն ժամանակ զէրօէն վար եղած ցուրտ ատենները ալ կրնայ պատահել, ասոր հակառակը ըլլալով սաստիկ տաք աստիճանները երբեմն զարմանալի կերպով այս. հիւանդութեան ընթացքը դադրեցուցած են։

Ժանտախտը ոչ սեռի, ոչ տարիքի, և ոչ ալ ցեղի կը խնայէ, բայց պէտք է խոստովանիլ թէ թշուառութիւնը, զրկանքը, սովը, աղտոտութիւնը, մարդկանց միատեղ հաւաքումը, շատ կը նպաստեն հիւանդութեան տարածմանը։ Ժանտախտը սովորաբար խիստ կերպով կսկսի, հիւանդը նախ սաստիկ գլխու ցաւէն կը դանդատի, յետոյ կունենայ սոսմոքսի ցաւեր և կոկորդի այրում, դէմքը կը փոխուի, քիչ յետոյ հիւանդը կստիպուի պառկիլ ուսկից վերջ, ոյժի պակասութիւն, խօսելու մէջ շփոթութիւն և նայուածքին մէջ տխրութիւն մը կունենայ, շատ անգամ ալ սրտի խառնուք, փսխում և փորահարութիւն։ Քիչ յետոյ ջերմը կսկսի և մարմնոյ տաքութիւնը մինչև 40—41 աստիճանի կը հասնի, բազկերակը 120—140 կը նետէ, շնչառութիւնը կարագանայ, լեզուն կը սևնայ, կը չորնայ և ճեղքուածքներ կունենայ, նոյնպէս շրթունքները կը սևնայ, դարձեալ այս շրջանին մէջ զառանցում յառաջ կուգայ, մարմնոյ ծայրերը կսկսին պաղել, փսխումը, փորհարութիւնը, հազը կաւելանայ վերջապէս հիւանդը տարբեր կողմերէ արիւնհոսութիւններ կունենայ, իսկ այս ախտանիշերը որք հիւանդութեան երկրորդ շրջանը կը կազմին 1—3 օր կը տեւէ։

Ասկից վերջ կուգայ երրորդ կամ վերջին շրջանը որ ասս ալ երկու ախտանիշով կորոշւի որ գրեթէ շատ անգամ աւելի կանուխէն ալ կրնայ սկսիլ, ասոնք են պիւպօն (տեսակ մը ուռուցք է) և շառպոն (շառպոնը տեսակ մը վերք է որ ծածկուած է սեագոյն և քաշ ձկեղային կեղևով մը)։

Ժանտախտի պիւպօնները կրնան յառաջ գալ բորոր աւշային կապերուն (ganglion) մէջ բայց գլխաւորապէս կը յարձակի աճուկի, ծունկի, ծոծրակ (խոլթուխ) և վզի խոռոչներուն կապերուն մէջ և մինչև որ այդ պիւպօններուն մէջ թարախացում յառաջ չի գայ,

մորթին գոյնը չի փոխուիր, այս պիւլաոններուն երևցած առենը երբեմն կը պատահի որ հիւանդին ջերմը կը դադրի և կամաց կամաց կսկսի բարւոքել. բայց ամեն ատեն այսպէս չըլլար, որովհետև շատ անգամ մահը կրնայ հասնել պիւլաոններուն լեցուելէն առաջ։ Գալով շուռալաոններուն որոնք ժանտախտի և յատուկ տեսակ մը վէրք ըլլալով յառաջ կուգան մորթին վրայ և խիստ այրումով մը կսկսեն սը նախ հիւանդը վերքին երեսին վրայ կը զգայ որ հետզհետէ մարմնոյն մէջ կանցնի և մինչև իսկ ոսկորները կը հասնի. շուռալաոնի վերքը մէկ հատէն մինչև 12 կրնայ ըլլալ և յառաջ կուգայ մարմնոյ այլ և այլ մասերուն վրայ, ի բաց առեալ ձեռքերու մէջ և ոտքերու տակ ուսկից վերջ մահը շուտով կը հասնի. բայց սա հաստատուած է թէ վարակեալներուն հարիւրին յիսունը կարելի է ազատել երբոր աւշային կապերուն և խոռոչներուն թարախացման առաջքն առնուի։

ԱՌՈՂՋԱՊԱՀՊԱՆ ԽՐԱՏՆԵՐ

Համաճարակներէ ղերձ մնալու համար ամենէն էական և անհրաժեշտ պայմանը խիստ մաքրութիւնն է։

Համաճարակի ատեն ամենէն զգուշանալիք կէտը ուտելիքն է որովհետև ասոնցմով ոչ թէ միայն համաճարակները, այլ ուրիշ շատ տեսակ հիւանդութիւններ այլ կը փոխանցուին. անոր համար խիստ զգուշութիւն ընելու է։

Պտուղ ուտելէ բոլորովին հրաժարելու է։

Մսեղէն և բուսեղէն ուտելիքները պէտք է լաւ եփել որպէս զի հիւանդութեան միքրոպները ջնջուին։

Հացը ուտելէ առաջ, պէտք է կրակի վրայ լաւ մը չորցնել։

Կերակուրներուն կաթառները, պնակները, գաւաթները, վերջապէս խոհանոցի և սենեակի ամեն տեսակ գործիքները և կարասիքները, գործածելէ առաջ կրակի վրայ բռնելու և նոյնպէս միքրոպները ջնջելու նպատակաւ։

Ջուրը լաւ մը եռացնելէ վերջ պէտք է խմել, այն ալ վազուկ ջուրերը միայն, որովհետև հոս ջրամբարները (ապամպար) արտաքնոցներուն անմիջապէս քովը ըլլալնուն համար, ամեն տեսակ աղտոտութիւն կրնան պարունակել, ուրիշ տեղեր ալ գրեթէ այսպէս է բայց անոնք գոնէ չէմենթոով ծեփուած ըլլալնուն համար, շատ դժուարաւ կանցնի։ Ասկից զատ հոս ջուրին համար առհասարակ վտանգաւոր սկզբունք մը ժողովուրդին մէջ մուտք գտած է «թէ ջուրը աղտոտութիւն չընդունիր» (սու փիսլիք դալտուրմազ), մինչդեռ ամեն տեսակ հիւանդութիւն ըլլայ վտանգաւոր կամ անվտանգ. թեթև կամ ծանր, ամենքն ալ ջուրի միջոցաւ մեծ դիւրութեամբ կը փոխանցուին։

Գերակուրները պէտք է ըլլան թեթև և դիւրամարս (միս, հաւ, կաթապուր, պանիր, հաւկիթ, կաթ եայլն) և միևնոյն ժամանակ պէտք է քիչ ուտել, մանաւանդ պէտք է զգուշանալ դժուարամարս և փորահարութիւն պատճառող կերակուրներէ, ինչպէս իւղոտ կերակուրները, անուշեղէնները, չելաւ, աշ, եայլն։

Ստէպ պէտք է թէյ խմել, մանաւանդ երբոր մէջը քիչ մը քօնեաք աւելցուի աւելի օգտակար կըլլայ։

Կաթը լաւ մը եռացնելէ վերջ պէտք է գործածել։

Գալով բնակութեան վայրերուն՝ պէտք է ըլլան լուսաւոր, օդաւէտ և խոնաւութենէ զերծ, մանաւանդ ննջարաններուն մաքրութեան խիստ ուշադրութիւն ընելու է, սենեակներուն մէջ պէտք է ասիտ ֆէնիքի լուծուածքներ պարունակող սկաւառակներ դնել օդին մաքրութեան համար, զայն պատրաստելու համար 3 մբսկալ ասիտ ֆէնիք, 100 մբսկալ ջուրի մէջ հալեցնելու է.

Օրը, գոնէ անգամ մը արտաքնոցներուն մէջ պէտք է կիրի լուծուածք թափել (5 սիր կիր 20 սիրի չափ ջուրի հետ խառնելով), բայց սիւլֆաթ տը ֆէրի լուծուածքը աւելի յանձնարարելի է, զայն պատրաստելու համար 2 մբսկալ սիւլֆաթ տը ֆէր 20 մբսկալ ջուրի մէջ հալեցնելու է։

Համաճարակի ատեն մարմինը խիստ մաքուր պահելու է բայց միևնոյն ժամանակ բաղնիք երթալն ալ վտանգաւոր է, (մանաւանդ տեղական բաղնիքները) որովհետև գրեթէ ջուրերը միշտ վարակուած ըլլալով իսկ բաղնիքի ջուրերն ալ լաւ եռացած չըլլալուն համար այդ պատճառաւ համաճարակը շուտով կը փոխանցուի որով աւելի խոհեմութիւն է տան մէջ լուացուիլ, այն ալ խիստ զգուշութիւններով։

Իսկ ժանտախտէ բռնուող անձանց կամ կարասիքը խիստ հականեխումէ մը վերջ պէտք է գործածել, և այդ հականեխումները կարասիքն տեսակին համեմատ կը փոխուին, օրինակի համար։

Կաուչուկէն և բամբակեղէն պիտոյքները (շապիկ, թաշկինակ, գօտի, անձեռնոց եայլն) պէտք է ասիտ ֆէնիքի և կամ սիւլֆաթ տը ֆէրի լուծուածքներով լուալ. և կամ թէ մէկ ժամու չափ պարզ ջուրի մէջ լաւ մը եռացնելու է։

Բրտեղէնները (վերարկու, բանթալօն, անկողին, ծածկոց, վերմակ եայլն) կարելի է վերոյիշեալ լուծուածքներով հականեխել և կամ թէ ծծումբով (քիւքիւրա), ծծումբով հականեխելու համար պզտիկ կրակարան մը առնելով վրան երկաթի թերթ մը դնելու է և այդ թերթին վրայ ծծումբը դնելու է որ կսկսի այրել և իրեն մասնաւոր հոտը և մուխը (ասիտ սիւլֆիւրէօ) դուրս տալ, յետոյ սենեակին գուռները լաւ մը գոցելով 24 ժամ այդ վիճակի մէջ պահելու է, իսկ միևնոյն ժամանակ վերոյիշեալ զգեստեղէնները պէտք է շուանի մը վրայ կախուած ըլլան. այս գործողութիւնը կատարելու համար 5 սիր ծծումբ բաւական է, սովորական սենեակի մը համար։

Գաշիէ, փայտէ կարասիքներուն համար նոյնպէս վերոյիշեալ լուծուածքները և կամ ծծումբի հականեխակնը պէտք է գործածել։

Գալով ժանտախտաւորներուն անկողինին և անմիջական պիտոյքներուն պէտք են ուղղակի կրակ տալ, քիչ մը նաւթ աւելցնելով։

Համաճարակի ատեն մօրուքները և մազերը, պէտք է ածելել և կամ թէ կարճ կարել տալ, և որովհետև միքրոպներուն լաւ բոյն մը կրնան սեպուիլ, անոր համար, շատ անդամներ սիւպլիմէ քորոզիֆ (պիքլորիւր տը մէրքիւր) առնելով 1000 մբսկալ ջուրի մէջ հալեցնելու է միևնոյն ժամանակ 5մբսկալ ալ աղ աւելցնելու, շուտով և լաւ հալեցնելու համար։

Այս յօդուածս վերջացուցած միջոցիս իմացայ թէ, գիտութիւնը ժանտախտի միքրոպն ալ յայտնած է գտնել ասկից զատ անոր դարմանն ալ գտնուած է երջանկայիշատակ Բասթէօրի աշխատանոցին մէջ, սէրոմարուժական դրութեամբ։ Զայն ձեռք բերելու համար, երիտասարդ ձիերու արեան սէրումը առնելով կը պատրաստեն, իսկ այդ ձիերը ամսական հաղիւ 20 լիթրա արիւն կրնան արտադրել, և այդ 20 լիթրա արիւնէն 9 լիթրա սէրում կարելի է պատրաստել, որ այս վերջինն ալ 180 վարակեալի կը բաւականանայ։ Ասկից զատ Վիէննայի վերջին առողջապահական ժողովին որ ժանտախտի համար կազմուած էր, անդամներէն բրօֆէսօր Պաղէլլի առաջարկած է սիւպլիմէի ներարկում, որ արդէն Լոնդոնի բրօֆէսօրներէն Էռնէսթ Լան, կարգ մը նմանօրինակ հիւանդութեանց համար մեծ յաջողութեամբ կատարած է։

Կ. Բաբարեան

Արտօնատէր հրատարակիչ՝
ԱՆԴՐԻԱՍ ԲԷԿՆԱԶԱՐԵԱՆ